ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2020/90

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Մասնակից՝ «Խաչպար» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/7» գնանշման հարցում, քիմիական և լաբորատոր նյութերի ձեռքբերում:

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԳՀԱՊՁԲ-9/7-5»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 27.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4675-2020 գրությամբ «Խաչպար» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 26.03.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/977-2020 գրության հիման վրա, 27.03.2020թ.-ին «Խաչպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 27.03.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/90 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել www.gnumner.am կայքում:

03.04.2020թ.-ին, 14.04.2020թ.-ին և 27.04.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 14.04.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 27.04.2020թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 26.03.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/977-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և ստորև ներկայացված կազմակերպությունների միջև կնքված գնման պայմանագրերի 2.1.7.1 կետերի բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանությունը՝

1. միակողմանի մասնակի լուծել է՝ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի հետ 19.02.2019թ. կնքված N ԷԱՃԱՊՁԲ-9/9-7 գնման պայմանագրին կից 12.04.2019թ. կնքված N1 համաձայնագիրը,

2. միակողմանի մասնակի լուծել է՝ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի հետ 26.02.2019թ. կնքված N ԷԱՃԱՊՁԲ-9/10-7 գնման պայմանագրին կից 22.04.2019թ. կնքված N1 համաձայնագիրը,

3. միակողմանի մասնակի լուծել է՝ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի հետ 26.02.2019թ. կնքված N ԷԱՃԱՊՁԲ-9/11-4 գնման պայմանագրին կից 03.04.2019թ. կնքված N1 համաձայնագիրը,

4. միակողմանի լուծել է՝ «Խաչպար» ՍՊԸ-ի հետ 19.08.2019թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-9/7-5 գնման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրերի և համաձայնագրերի լուծման վերաբերյալ գրությունը 23.03.2020թ. ուղարկվել է մասնակցի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Խաչպար» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

Ներկայացված լրացմամբ, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է նաև հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ ՀՀ ՊՆ կարքների համար «Բժշկական պարագաների և վիրակապական նյութերի» ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/7 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակերում «Խաչպար» ՍՊԸ-ն մասնակցության հայտ էր ներկայացրել և սույն ընթացակարգի 26-րդ չափաբաժնի մասով /Կատետեր միզային երկճյուղանի FR-16/ ճանաչվել էր առաջին տեղ զբաղեցրած, այնուհետև ընտրված /հաղթող/ մասնակից: Անգործության ժամկետի ավարտից հետո 08.08.2019թ. armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցմամբ «Խաչպար» ՍՊԸ-ին ուղարկվեց կնքվելիք պայմանագրի նախագիծը և գրությամբ տեղեկացվեց, որ մասնակիցը պետք է ներկայանա ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեով ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների վարչություն և կնքի պայմանագիրը: «Խաչպար» ՍՊԸ-ի տնօրենի կողմից 16.08.2019թ. ստորագրվեց և հաստատվեց ԳՀԱՊՁԲ-9/7-5 ծածկագրով պայմանագիրը: Դա, ինչպես նաև ընթացակարգի մնացած մասնակիցների կողմից ստորագրած պայմանագրերը 19.08.2019թ. ստորագրվեցին և հաստատվեցին պատվիրատուի ղեկավարի կողմից, որոնք էլ 20.08.2019թ. սահմանված կարգով մուտքագրվեցին էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության համակարգ (PPCM համակարգ), որտեղ և «Պայմանագրեր» բաժնում, ինչպես բոլոր ընթացակարգերի արդյունքում կնքած պայմանագրերը, այդ թվում նաև ԳՀԱՊՁԲ-9/7-5 ծածկագրով պայմանագիրը ազատ հասանելի է https://www.armeps.am/ppcm/public/contracts/download-attachment?id=a3ce8d51-d7dd-47bb-a53c-d65982a4b8fc հղմամբ: Բացի այդ Armeps համակարգի մասնակցի որպես «Օգտատեր» պրոֆիլի «Պայմանագրեր» բաժնում հասանելի է պայմանագրի երկկողմանի

ստորագրված, կնքված և սկանավորված տարբերակը, ինչից և պարզ է դառնում, որ պայմանագիրը պատվիրատուի կողմից ևս ստորագրվել է և ուժի մեջ է մտել, ուստի «Խաչպար» ՍՊԸ-ն փաստացի տեղյակ է եղել պայմանագրի երկկողմանի ստորագրված լինելու մասին:

Բացի այդ, ՀՀ պաշտպանության նախարարությունում տարիներ շարունակ գործող փաստաթղթաշրջանառության համաձայն ընկերության տնօրենը կամ նրա կողմից լիազորված անձը ներկայանալով ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության գործավարություն և պահանջելով պայմանագրի իր օրինակը ԳՓՁ վարչության գործավարության աշխատակցի կողմից համապատասխան մատյանում գրանցում կատարելուց և նշված մատյանում ստորգրելուց հետո նրան է տրամադրվում պայմանագրի կամ պայմանագրերին կից կնքված համաձայնագրերի ու փոփոխությունների իրենց օրինակները, նման կարգով էլ «Խաչպար» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարությունից տարիներ շարունակ ստացել է պայմանագրերը, պայմանագրերին կից կնքված համաձայնագրերի ու փոփոխությունների իր օրինակները և որևէ անգամ որևէ խնդիր չի առաջացել:»:

3. <u>«Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 27.03.2020թ.-ի գրությամբ դիմել է «Խաչպար» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4675-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացրել է գրավոր դիրքորոշում և հայտնել հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 27.03.2020թ. գրության հայտնում եմ հետևյալը՝

19.07.2019թ. «Խաչպար» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ ՊՆ-ի կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/7» ծածկագրով մրցույթին՝ ներկայացնելով գնային առաջարկ (կից փաստաթուղթ թիվ 1):

25.07.2019թ. «Խաչպար» ՍՊԸ-ն էլ. փոստով ստացել է ծանուցում 1-ին տեղ զբաղեցնելու մասին (կից փաստաթուղթ թիվ 2):

29.07.2019թ. «Խաչպար» ՍՊԸ-ն էլ. փոստով ներկայացրել է Հավելված թիվ 6 և Հավելված թիվ 6.1 (կից փաստաթուղթ թիվ 3, էջեր 1-2):

31.07.2019թ. «Խաչպար» ՍՊԸ-ն էլ. փոստով ստացել է ծանուցում շտկում կատարելու մասին (կից փաստաթուղթ թիվ 4):

31.07.2019թ. «Խաչպար» ՍՊԸ-ն էլ. փոստով ներկայացրել է Հավելված թիվ 6 և Հավելված թիվ 6.1-ի շտկված տարբերակները (կից փաստաթուղթ թիվ 5, էջեր 1-2):

08.08.2019թ. «Խաչպար» ՍՊԸ-ն «Armeps» համակարգով ստացել է «ԳՀԱՊՁԲ-9/7-5» ծածկագրով պայմանագրի նախագծի էլեկտրոնային տարբերակը (փաստաթուղթ թիվ 6, էջեր 1-6) կից ցուցումով, որ «Անհրաժեշտ է .... սահմանված ժամկետում կազմել պայմանագրի կատարման ապահովում, ստուգել պայմանագրի նախագիծը և ստորագրելու համար ներկայանալ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչություն՝ ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում:» (կից փաստաթուղթ թիվ 7, արված նշումները):

2019թ օգոստոսի 12-15-ը ընկած ժամանակահատվածում «Խաչպար» ՍՊԸ-ի տնօրենի կողմից կացմվել են պայմանագրի կատարման ապահովման համար անհրաժեշտ փաստաթղթերը (կից փաստաթուղթ թիվ 8, էջեր՝ 1-2), որոնք անձամբ ներկայացրել է ՀՀ ՊՆ, որտեղ նաև ստորագրել ու կնքել է «ԳՀԱՊՁԲ-9/7-5» ծածկագրով պայմանագրի և նրան կից Հավելվածների 2 օրինակները.

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրենի կողմից կնքված և ստորագրված «ԳՀԱՊՁԲ-9/7-5» ծածկագրով պայմանագրի և նրան կից Հավելվածների 2 օրինակները ըստ ՀՀ ՊՆ-ի սահմանած կարգի, այնուհետև պետք է կնքվեին ու հաստատվեին ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի կողմից, որից հետո դրանց մեկական օրինակները պետք է տրամադրվեին «Խաչպար» ՍՊԸ-ին նախատեսված գրաֆիկով մատակարա-րումներ կատարելու համար:

Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ ՊՆ-ի կողմից «Խաչպար» ՍՊԸ-ին չեն տրամադրվել ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի կողմից կնքված և ստորագրված «ԳՀԱՊՁԲ-9/7-5» ծածկագրով պայմանագրի և նրան կից Հավելվածների օրինակները, ինչը արգելք է հանդիսացել, որպեսզի »Խաչպար» ՍՊԸ-ի կողմից կատարվեին այդ պայմանագրով պահանջվող 400 հատ «Կատետեր միզային երկճյուղանի FR-16» ապրանքի (որն այլ կերպ անվանվում է նաև կատետր՝ Ֆոլեյի՝ երկճյուղ, 16FR) մատակարարումները:

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 31.07.2019թ. Հավելված թիվ 6.1-ի շտկված տարբերակով ՀՀ ՊՆ-ին առաջարկվել էր Չինաստանի «SUMBOW» ֆիրմայի արտադրության «Կատետեր միզային երկճյուղանի FR-16» ապրանքը, որից թվով 3500 հատ, «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից դեռևս 2019թ. ապրիլի 19-ին պատվիրվել էր Չինաստանի «SUMBOW» ֆիրմային՝ համաձայն թիվ SUMSC19110&18151 հաշիվ-ապրանքագրի (կից փաստաթուղթ թիվ 9, արված

նշումները), և որոնք ՀՀ փարածք էր ներմուծել 2019թ. հուլիսի 2-ին համաձայն Արարատյան մաքսատուն-վարչության թիվ 05100010/020719/0057335 հայտարարագրի (կից փաստաթուղթ թիվ 10, էջեր 1 և 2, արված նշումները):

Համաձայն ՀՀ ՊՆ-ի գնման ժամանակացույցի սահմանված էր, որ մատակարարումները 200- ական քանակներով, պետք է կատարվեին 2019թ. 3-րդ և 4-րդ եռամսյակներում, այսինքն 2019թ. հուլիսի 1-ից մինչև նոյեմբերի 29-ը (կից փաստաթուղթ թիվ 6, էջ 6):

2019թ. հուլիսի 3-ին «Խաչպար» ՍՊԸ-ի պահեստում արդեն առկա էր Չինաստանի «SUMBOW» ֆիրմայի արտադրության «Կատեգոր միզային երկճյուղանի FR-16» ապրանքից թվով 3500 հատ, այնպես որ ՀՀ ՊՆ-ի համար անհրաժեշտ 400 հատը մատակարարելը անհապաղ կարող էր կատարվել «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից, եթե ՀՀ ՊՆ-ի կողմից «Խաչպար» ՍՊԸ-ին տրամադրված լիներին ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի կողմից կնքված ու հաստատված «ԳՀԱՊՁԲ-9/7-5» ծածկագրով պայմանագրի և նրան կից Հավելվածների օրինակները, որոնք «Խաչպար» ՍՊԸ-ին չեն տրամադրվել ՀՀ ՊՆ-ի աշխատակիցների կողմից, ուստի «Խաչպար» ՍՊԸ-ն հնարավորություն չի ունեցել մատակարարումներ կատարելու:»:

Ելնելով վերոգրյալներից, Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է մերժել «Խաչպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգը հիմքերի բացակայության հիմքով:

4. <u>ՍՑ-LO-2020/90 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Խաչպար» ՍՊԸ-ի միջև 19.08.2019թ.-ին կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ–9/7-5» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ մատակարարումը պետք է իրականացվի մինչև 29.11.2019թ.-ը:

www.gnumner.am համացանցային կայքում 23.03.2020թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին 23.03.2020թ.-ի թիվ ԴՎԱ/1044 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Խաչպար» ՍՊԸ-ի միջև 19.08.2019թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-9/7-5» ծածկագրով պետական գնման պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 20.03.2020թ.-ին միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել են մատակարարման ժամկետները):

ՀՀ պաշտպանության նախարարության և «Խաչպար» ՍՊԸ-ի միջև 19.08.2019թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-9/7-5» ծածկագրով պետական գնման պայմանագիրը չի կնքվել Պատվիրատուի կողմից:

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը Պատվիրատուի կողմից ստորագրված և կնքված չէ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.03.2020թ. թիվ 26/26-1/4675-2020 գրությամբ «Խաչպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Խաչպար» ՍՊԸ-ի միջև 19.08.2019թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-9/7-5» ծածկագրով պետական գնման Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ մատակարարումը պետք է իրականացվի մինչև 29.11.2019թ.-ը:

www.gnumner.am համացանցային կայքում 23.03.2020թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին 23.03.2020թ.-ի թիվ ԴՎԱ/1044 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Խաչպար» ՍՊԸ-ի միջև 19.08.2019թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-9/7-5» ծածկագրով պետական գնման պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 20.03.2020թ.-ին միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել են մատակարարման ժամկետները):

Սույն գործում և https://www.armeps.am/ppcm/public/contracts/download-attachment?id=a3ce8d51-d7dd-47bb-a53c-d65982a4b8fc հղմամբ առկա Պատվիրատու կողմից թիվ 26.03.2020թ. թիվ ՊՆ/Պն/02/977-2020 գրությամբ ներկայացված ՀՀ պաշտպանության նախարարության և «Խաչպար» ՍՊԸ-ի միջև 19.08.2019թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-9/7-5» ծածկագրով պետական գնման պայմանագիրը ստորագրվել է, սակայն չի կնքվել Պատվիրատուի կողմից:

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը Պատվիրատուի կողմից ստորագրված և կնքված չէ:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը Պատվիրատուի կողմից ստորագրված և կնքված չլինելու հանգամանքը չի կարող առաջացնել իրավական հետևանքներ, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով գրավոր գործարքը, ինչպիսին համարվում է կողմերի միջև 19.08.2019թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-9/7-5» ծածկագրով պետական գնման պայմանագիրը, պետք է կնքվի փաստաթուղթ կազմելու միջոցով, որն արտահայտում է գործարքի բովանդակությունը և ստորագրված է գործարք կնքող անձի կամ անձանց կամ նրանց կողմից պատշաճ ձևով լիազորված անձանց կողմից:

Անդրադառնալով Մասնակցի կողմից Պայմանագրի օրինակը չստանալու փաստական հանգամանքին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պայմանագրի 8.13 կետի հիման վրա Պայմանագիրը պետք է կնքվեր երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվեր մեկական օրինակ:

Սույն գործում առկա փաստերի և ներկայացված դիրքորոշումների հաշվառման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ «Խաչպար» ՍՊԸ-ին չի տրամադրվել Պայմանագրի իր օրինակը, որը վերջինս ստորագրված և կնքված տարբերակով հանձնել էր Պատվիրատուին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը Պատվիրատուի կողմից ստորագրված և կնքված չլինելու հանգամանքը չի կարող առաջացնել «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի հավելված 1-ով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորության խախտման, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել

ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.03.2020թ. թիվ 26/26-1/4675-2020 գրությամբ «Խաչպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/90 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ